ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» ապրիլի 2022թ. № 268

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԵՐՈԺԻ ԱՂԱՄԻՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրի բնակիչ Ռուզաննա Սերոժի Աղամիրյանի ներկայացուցիչ Արտուր Հարությունյանը 2022 թվականի մարտի 14-ին դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով ընդունել բարենպաստ վարչական ակտ Ռուզաննա Սերոժի Աղամիրյանի ընտանիքին Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց հերթացուցակում ընդգրկելու մասին:

Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի համաձայն՝ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները ենթակա են հաստատման համայնքի ղեկավարի կողմից՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 15-ը: 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո դիմումներ չեն ընդունվում, և այդ ժամկետում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով՝ սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունների կատարումը համարվում է դադարեցված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 55-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետով, հաշվի առնելով,

որ Ռուզաննա Սերոժի Աղամիրյանը դիմումը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետից հետո՝ ***որոշում եմ.***

1. Ռուզաննա Սերոժի Աղամիրյանի 2022 թվականի մարտի 14-ի՝ Ռուզաննա Սերոժի Աղամիրյանի ընտանիքին Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած հերթացուցակում ընդգրկելու մասին դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուզաննա Սերոժի Աղամիրյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում վարչական կարգով Սպիտակ համայնքի ղեկավարին, կամ՝ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » ապրիլի 2022թ. № 269

ՄԱՐԶԻԿ ԼԵՎԻԿ ԱՐՏԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, 2022 թվականի Պաուերլիֆտինգի Եվրոպայի առաջնությունում առաջին պատվավոր տեղը զբաղեցրած մարզիկ Լևիկ Արտակի Հակոբյանին խրախուսելու նպատակով դափնեպսակ, շնորհակալագիր, շնորհակալագրի շրջանակ, հուշանվեր և նվերի տոպրակ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 16 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
14 ապրիլի 2022 թվականի N 270-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 41-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 384-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1532-Ն որոշումը՝որոշում եմ

1. Ռազմական դրության ժամանակ և խաղաղ պայմաններում Սպիտակ համայնքի բնակչության և քաղաքացիական պաշտպանությանն (այսուհետ՝ ՔՊ) ուղղված աշխատանքների պլանավորման և կազմակերպման, խոցման օջախներում վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար համայնքապետարանի և կազմակերպությունների հիման վրա ստեղծել՝

1) ՔՊ շտաբ և ՔՊ ծառայություններ՝ համաձայն հավելված 1-ի.

2) Տարհանման հանձնաժողով ՝ համաձայն հավելված 2-ի.

3) ՔՊ կազմավորումներ ՝ համաձայն հավելված 3-ի.

4) ՔՊ կազմավորումների ցուցակ՝ համաձայն հավելված 4-ի:

2. ՔՊ ծառայությունների ղեկավարներին ՝ մշակել և Սպիտակ համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ծառայությունների կանոնադրությունները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Սպիտակ համայնքի ղեկավարին:

4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2022 թվականի N 271-Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ, ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ, ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ, ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ, ՈՒԺԵՐԻ ԵՎ ԿԱՊԻ, ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 49-Ա որոշման պահանջները որոշում եմ՝

1. Հաստատել՝
1) Քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը.
2) Հիմնական ցուցանիշները՝ համաձայն թիվ 1 հավելվածի.
3) Հնարավոր իրավիճակի պլանը և բացատրագրերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի
4) Կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն թիվ 4 հավելվածի.
5) Քաղաքացիական պաշտպանության և հետախուզության բացատրագրերը՝ համաձայն թիվ 6 հավելվածի.
6) Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն թիվ 7 հավելվածի.
7) Բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն թիվ 8 հավելվածի.
8) Բնակչության տարհանման հաշվարկը՝ համաձայն թիվ 9 հավելվածի.
9) ՈՒԺերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն թիվ 10 հավելվածի.
10) Կապի միջոցների հաշվարկը՝ համաձայն թիվ 11 հավելվածի.
11) Ինժեներական ապահովման հաշվարկը՝ համաձայն թիվ 12 հավելվածի.

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Սպիտակ համայնքի ղեկավարին:

4. Որոշումը հայտարարել ընտ. առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2022թ. № 272

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ՋԵՌՈՒՑՈՂ ԿԱԹՍԱՅԻ ՋՐԻ ՊՈՄՊԻ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով էլեկտրիկ Հայկ Սամվելյանի և տնտեսվար Սերգեյ Դանիելյանի զեկուցագիրը, Արևաշող բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը ջեռուցող կաթսայի ջրի պոմպի վերանորոգման համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» գործառական դասակարգման «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 4252 հոդվածից հատկացնել 70000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2022թ. № 273

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ HP 226 DW 2 ՏՊԻՉ ՍԱՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ 3 ՔԱՐԹՐԻՋԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով ցանցային ադմինիստրատոր Վահե Մաթոսյանի 2022 թվականի ապրիլի 19-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի HP 226 DW 2 տպիչ սարքերի համար 3 քարթրիջի ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» գործառական դասակարգման «Գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական դասակարգման 4261 հոդվածից հատկացնել 21 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» ապրիլի 2022թ. № 274

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ 250 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Սպիտակ համայնքի ղեկավարի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ 250 որոշմամբ տրված հասցեի անճշտությունը՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2018 թվականի հուլիսի 9-ի՝ «Մայիս Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 250 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. Ապրիլի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» ապրիլի 2022թ. № 275

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-087-0044-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 01042022-06-0003 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06087NYFCYJA) և Արայիկ Սամվելի Մանգասարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արայիկ Սամվելի Մանգասարյանին, Սամվել Նազարեթի Մանգասարյանին, Անգին Անդրանիկի Մանգասարյանին, Կարինե Սամվելի Պետրոսյանին, Նարինե Սամվելի Բաբայանին, Հովհաննես Սամվելի Մանգասարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող, 06-087-0044-0008 կադաստրային ծածկագրով, 0,124 հա մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ.Շիրակամուտ, 14-րդ փողոց, թիվ 58» հասցեն (փոստային դասիչը՝ 1820):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 15
ք.Սպիտակ